հետև դեսպանները վճռեցին համաձայնութեամբ գործել, որպէս զի դրդեն Բ. Դրանը բարւոքել իր հայ հպատակների դրութիւնը։ Ներկայ տարւայ յունիսի 11-ին պետութիւնների ներկայացուցիչները առաջին անգամ միաձայն առաջարկութիւններ արին այդ հարցի վերաբերութեամբ։ Այդ հաղորդութեանը Բ. Դուռը յուլիսի 5-ին տուած մի շրջաբերականով պատասխանեց, որի մէջ նա պատրաստակամութիւն էր յայտնում աւելի ընդարձակ վերանորոգութիւններ մտցնել ամբողջ պետութեան մէջ և մի և նոյն ժամանակ հրաժարվելով շատ քիչ բան կատարել։ Բ. Դրան տուած պատասխանի կատարեալ անբաւարարութիւնը խոստովանվեցաւ բոլոր պետութիւնների ներկայացուցիչներից և այդ անբաւարարութիւնը մեկնելու համար օգոստոսի 7-ին դեսպանները նորից միաձայն մի շրջաբերական ներկայացրին։ Այս վերջին շրջաբերականի պատասխանին անհամբերութեամբ սպասում են ամենքը, որոնք հետաքրքրվում են Թիւրքիահպատակ հայերի վիճակով։ Բայց չը սպասելով այդ պատասխանին, լորդ Գէօֆերին առաջարկեց իր կառավարութեանը ուղարկել Թիւրքաց Հայաստանը իր հաւատարմատարին արտաքոյ կարգի իշխանութեամբ, որպէս զի նա, համաձայնվելով եւրոպական հիւպատոսների հետ, միջոցներ գործադրի վերջնական վերանորոգութիւններ պատրաստելու համար։

Միայն մի փոքր անբաւականացուցիչ դրութեան մէջ է այն հարցը, թէ ինչպէս է մեկնում Բ. Դուռը վերջին տարիների ընթացքում իր կրած հարուածները և իր ահագին կորուստները թէ փողով, թէ մարդկերանցով։ Կարծես թէ այլ ևս չէ կարելի կասկածել, որ Թիւրքիային պատահած դժբաղդութիւնների իսկական աղբիւրը նրա զանազան դաւանութեան հպատակների վրդովեցուցիչ անհաւասարութիւնը, վարչական և դատաստանական վիճումները, վայրենի ցեղերի ֆանատիկոսութեանը հովանաւորելն են կազմում, որ անկարելի են դարձնում մշտաբնակ և խաղաղ ազգաբնակութեան բարօրութիւնը։ Կարելի էր մտածել, որ չէրքէզների կատարած արիւնհեղութիւնը Բօլգարիայի մէջ և գլխաւորապէս դրա պատճառով եւրոպական Թիւրքիայի $^{2}/_{3}$ անջատվելը Թիւրքիայից 10 միլիոն բնակիչներով բաւական նշանաւոր դաս պէտք է լինէր, մինչդեռ բաւական է կարդալ Թիւրքաց կառավարութեան շրջաբերականը յուլիսի 5-ից համոզվելու համար, թէ որքան քիչ օգուտ են քաղել այդ և դրա նման պատմական դասերից սուլթանի խորհրդատուները։ Կամ թէ այս անգամ մենք գործ ունենք առաջադիմութեան թըշնամի այնպիսի ոյժերի հետ, որոնց համար անցեալի դասերը ոչինչ նշանակութիւն չունեն, որոնք չեն կարող հաշտվել ժամանակի պահանջների հետ և իրանց մէջ կրում են անփախչելի մահուան և քայքայման հետզհետէ զարգացող սերմեր։ Բայց չը պէտք է շուտով այդպիսի ցաւալի եզրակացութիւնների հասնել, պէտք է համբերել և աշխատել այն համոզմունքի գալ, որ հայկական խնդիրը խաղաղ և կանոնաւոր վճիռ կը ստանայ և որ այդ խըճըճված նուրբին հարցի աջողութեամբ վերջանալու պատճառը ոչ այնքան մեծ պետութիւնների ներկայացուցիչների պահանջները կը լինեն, որքան սուլթանի կառավարութեան լուրջ հասկացողութիւնը թիւրքական իսկական շահերի մասին։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Հայրենիք» լրագրում կարդում ենք հետեւեալ տողերը «Levant Herald» լրագրից քաղված. «Կը յիշեն ընթերցողք որ մայրաքաղաքիս դեսպանները անկէ 15 օր առաջ լորդ Գիւֆըրինի ապարանքը ժողով մը ընելով, որոշեցին Բ. Դրնէն խնդրել որ մասնաւոր յանձնախումբ մը ղրկէ ի Հայաստան։ Բ. Դուռը երէկ պատասխան տուեր է թէ կայսերական կառավարութիւնը դեսպանաց այս առաջարկութիւնը նկատողութեան պիտի առնու և անոնց փափաքանաց պիտի համակերպի։ Դրկուելիք արտասովոր պաշտօնեան տակաւին որոշված չէ։

—«Journal d'Orient» լրագիրը լսել է որ լորդ Գիւֆըրին պահանջում է որ Հայաստան ուղարկվի մի մահմետական պաշտօնեայ, որպէս կոմիսար։ Ֆրանսիական թերթը զարմանում է անգլիական դեսպանի այդ պահանջի մասին և աւելացնում է որ փորձը արդէն ցոյց տուեց որ մահմետական մի փաշա ոչինչ չի անի և հայոց խնդրի լուծումը միայն յետ կը գցվի, որ դուցէ Թիւրքիայի նպատակն է։

—«Порядокъ» լրագիրը լսել է որ երեւի Մուխթար-փաշան է ուղարկվում Հայաստան որպէս կոմիսար Բ. Դրան կողմից և պետութիւնների դեսպանների հաւանութեամբ։

—«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Բաբուրի Մըջըմէզրէ գիւղի ազգայինք երկար ատենէ ի վեր հողային խնդրոյ վերաբերեալ դատ մը ունէին նոյն գիւղէն Ճինօղլու անուն տաճկի մը հետ։ Գիւղացիք ի Խարբերդ նախնական քննութեամբ դատերնին շահած և սակայն յետոյ ի Տիգրանակերտ վերաքննութեամբ կորսուած ըլլալով, հոս ի Կ. Պոլիս վճռաջինջ ատեանին դիմեր և յիշեալ Ճինօղլուն մայրաքաղաքս բերել տուեր են։ Ցաւ ի սիրտ իմացանք որ յիշեալ անձին հետ մի քանի ազգայիններ ալ եկեր են հոս, որք ընդդէմ ազգային հանրական շահուց ջերմ պաշտպանութիւն կընեն եղեր Ճինօղլուի»։ Ահա հայոց մատնութեան մի ապացոյց. հայը գրկող մի թուրքի կողմն է բռնում և վկայ է գալիս մինչև Կ. Պոլիս հայի դէմ ցուցմունք անելու նպատակով։ Արդեօք դա ցաւալի երեւոյթ չէ։

—Ֆլօրէնտինեան «Nazione» լրագիրը յայտնում է, որ իտալական դիպլօմատիան պաշտպանում է պրինց Ժէրօմ Նապօլէօնի կանդիդատութիւնը եգիպտական գահի վրա։

—«Times» լրագրին Կվէտտայից հեռագրում են հոկտեմբերի 1-ին հետեւեալը. «Էմիրի զօրքերը երկու անգամ ջարդեցին Էյուբի զօրքերին Հէրատի հովտում։ Առաջին յաղթութեան ժամանակ գերի տարվեցաւ Էյուբի ազգականը։ Հէրատի նահանգապետը բանակցութիւններ սկսեց Հէրատը յանձնելու մասին, իսկ ինքն Էյուբ փախաւ Պարսկաստան։» Մէկ ուրիշ հեռագիր յայտնում է, որ Հէրատը արդէն գրաւված է Էմիրի զօրքերով։

—Անգլիական լրագիրներ գրում են հոկտեմբերի 1-ից, որ այսօր Գլադստոնին Լօնդոնի Սիտին մէկ ադրէս ներկայացրեց, որով ողջունում էին նրան նրա երկարամեայ ծառայութիւնների համար և խնդրում էին նրանից մի քանի սէանսներ տալ քանդակագործին մարմարեայ կիսարձան պատրաստելու համար։ Գլադստօն, շնորհակալութիւն յայտնելով պատգամաւորութեանը, յիշեց, որ Պառնէլի կալանաւորութիւնը անհրաժեշտ միջոց էր իռլանդացիների կեանքը, կարողութիւնը և ազատութիւնը պաշտպանելու համար։ Տրանսվաալի հետ ունեցած անհամաձայնութիւնները շուտով կը վերջանան։

—Լօնդոնի լրագիրներ գրում են. Լսվում է, որ Դիլլօն կը փոխարինէ Պառնէլլին որպէս կալուածական լիգայի առաջնորդ։ Բոլոր կուսակցութիւնների լրագիրները Պառնէլի կալանաւորութեան առիթով մեծ ուրախութիւն են յայտնում։

—Փարիզից լրագիրներին հաղորդում են, հոկտեմբերի մէկից։ Լսվում է, որ այսօր Գրէվի տեսակցելով Գամբէտտայի հետ սկսեց ընդհանուր գործերի դրութեան մասին խորհրդակցել։ Գամբէտտան այն կարծիքը յայտնեց, որ կաբինէտը չը պէտք է հրաժարական տայ։ Սահմանադրութեան և պարլամենտական սովորութիւնների համաձայն մինչև նոր կաբինէտի կազմելը հարկաւոր է սպասել պատգամաւորների ժողովի վիճաբանութիւնների վերջանալուն, որոնք անհրաժեշտ են սեսսիայի սկզբներին։ Գամբէտտայի կարծիքը լսելով, Գրէվի չը յանձնեց նրան նոր կաբինէտ կազմելը. նրանք խօսք տուին միմեանց կրկին տեսակցելու համար։

—Վիեննայի լրագիրները գրում են, որ Հէյմէրլէի թաղմանը ներկայ էին կայսրը, շատ էրցհերցօգներ և ուրիշ բարձրաստիճան անձինք։

—«Journal des Débats» լրագրի եգիպտական թղթակիցը հաստատում է, որ խէդիվի զօրքի ապստամբ գնդապետները մի քանի ամիս յառաջ բարեկամութիւններ ունէին սուլթան Աբդուլ-Համիդի հետ։ Նրանք նամակ ուղարկեցին նրան, որի մէջ բացատրում էին, որ Տունիսի անցքերը դրդում են նրանց միջոցներ գործ դնել եգիպտոսը քրիստոնեաների ձեռքով գրաւելու դէմ, և որ այդ պատճառով դիտաւորութիւն ունեն պահանջել եգիպտական զօրքի թիւը մեծացնել, յուսալով, որ սուլթանը կը պաշտպանի նրանց մտադրութիւնը, որով հետաքրքրվում է ամբողջ մահմետական աշխարհը։ Կ. Պոլսում ոչ թէ միայն գիտէին այդ մտադրութեան մասին, այլ և քաջալերում էին։ Եգիպտական նոր լրագիրները, որոնք ծառայում են որպէս օրգաններ այսպէս անուանված ազգային կուսակցութեան, սուլթանից օժանդակութիւն են ստանում։ Այս լրագիրները անդադար ապացուցանում են արեւելքի ժողովրդի գերազանցութիւնը արեւմուտքի ժողովրդից։ Արեւմուտքի ժողովրդներին յաղթելու համար, բաւական է որ նրանք զինաւորվեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի։ „Порядокъ“ լրագիրը հաղորդում է. հոկտեմբերի 6-ին զինուորական վարչութեան մէջ մասնաժողովի առաջին նիստը կայացաւ։ Մասնաժողովի կազմակերպութիւնը հետեւեալն է. նախագահ՝ կայսրու, անդամներ՝ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ, Տօտլեբէն, Բաղօսկի, Կօստանդա, Դրենտելն, Ալբեդինսկի, Կաուֆման երկրորդ, Սկօբօլեվ, Վանովսկի, Ֆէյլիտցեր, Բօօտ, Գելլինգաուզէն, Բիլտեր, Շուվալով երկրորդ, Օբրուչեվ, Սօֆիանօ, Իմերեթինսկի, Սկվօրցով, Շախօվսկոյ 3-րդ, Վօրօնցով-Դաշկով, Դրագոմիրով, Բօգնեռալս, Ջեդդելեր, Լօվկօ։ Հոկտեմբերի 7-ին էկսպերտները քննում էին խմիչքների խանութների սովորական թիւը։ Որոշված է գարեջրատները առանց գինու թոյլ տալ սովորականից աւելի։ Սովորական չափը 1000 հոգու վրա մի խանութ։ Զեմստվօները կարող են իրանք փոփոխել այդ չափը 25% աւելի ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 92 ր. 38 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 221 ր., երկրորդ 215 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 37 կ., երրորդ 90 ր. 37 կ., ոսկի 7 ր. 64 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 25,87 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ազգին ցեցերն ու ոտիճներն եղած են միշտ։

Իսկ տեսնելով այս ամեն, ինչ կերպ ու եղանակաւ վարվեցաւ ձեր ռուսահայ երիտասարդութիւնը, որ այնքան հիացմամբ ու զարմանօք կը կարդար պ. Նիկողոսեանի Երզրումէն գրած այն բազմաթիւ մեղմ ու թմբեցուցիչ գրութիւնները, յօդուածները, և որ այնքան գլուխնիք կընթեռնուր նորա սրտաճմլիկ և բոցացայտ հրաւէրներն սովի ժամանակ և այլն։ Ներուի ինձ ասել թէ ռուսահայ երիտասարդութիւնը այնքան փոքրոգի և զարգացումէ զուրկ կամ հեռու գտնվեցաւ, որ հանդիսատես լինելով միայն ձեր աշխատակցի ամբողջ լ ե գ է ո ն ի մը դէմ տարած պայքարին, ցայսօր ժամանակ խրախուսական բառ մը անգամ չարտասանեց, քաջալերական ձայն մը անգամ չը բարձրացուց, մինչդեռ Զմիւռնիայէն, Հայաստանի բարձրերէն և Եւրոպայի խորերէն կը հնչէին անդադար սիրալիր ու համակրական գոչումներ ու ձայներ։ Ռուսաստանի երիտասարդ հայը՝, որ այնքան կը հանէր այդ պարոնը Մ շ ա կ ի մէջ երեցած օրէն ի վեր, այդ առոյգ ու վառվռուն երիտասարդութիւնը կըսեմ, որ աւաղ, ոչ միայն փոքրոգութեամբ լռութիւն պահեց, և առաւելն տհաճութիւն ցըցուց («Մշակի» 162 թւոյն համեմատ) և ցանկաց որ վերջ առնուն «երկպառակութիւնները ու տարաձայնութիւնները» պատճառ բերելով թէ վիճաբանութեանց ժամանակը չէ հիմայ, այլ պէտք է «միանալ»։ Աւելի ճիշդը խօսելով, պէտք չէ կրէ նա այսպիսի մի ճգնաժամի մէջ հարուածել ապիկարութիւնը, մերկացնել կեղծ ու կեղտոտ ազգասէրները, մտրակել ու խարազանել ապարդիւն պոռոտախօսներն, հապա աւելի լաւ կը լինի եղեր թողուլ ասպարէզն ու հրապարակը մնալութեան ու անչնչութեան, հին նախապաշարութեան. թողուլ որ ճակատագիրը ինքն ինքեան բերէ, չինէ, կանգնէ ու կառուցանէ ամեն բան. ուստի կը գամք շնորհաւորել ձեր երիտասարդութեան այդքան բարձր, վսեմ հասկացողութիւն և յ ա ռ ա ջ ա դ ի մ ո ւ թ ի ւ ն ն որ կարող եղած են վերջապէս տանիլ Նազարեանցի, Նալբանդեանցի և «Մշակի» գործունէութեան ներքոյ....

Արդ, այս եղանակաւ ինչ եղած եղաւ, ինչ յայտնուած և արտադրած եղաւ. պ. Գրիգոր Նիկողոսեան իւր ութամսեայ արի և արդիւնալից գործունէութեան համար աստ ի Կ. Պոլիս, ինչ տպաւորութիւն գործած եղաւ ձեր երիտասարդութեան վերայ։ Ո՛չ մի օր, ո՛չ մի վայրկեան մտածել չը տուաւ ձեր ա զ գ ա ս է ր երիտասարդութեան ի նկատի առնուլ գէթ նորա նուիրական և ամենակարեւոր պահանջներն, որ կրնար յուսահատական լինել. ո՛չ միայն այսչափ, այլ և ձեր զ ա ր գ ա ց ե ա լ երիտասարդութիւնը խնայեց միանգամայն իւր բարոյական ջատագովութիւնները իսկ պ. Գրիգոր Նիկոսեանի վերաբերմամբ։ Ահա այս է, և այսպէս եղած է միշտ հայոց մէջ անկեղծ և արժանաւոր գործիչներու ճակատագիրն, որոնք դուք Մ շ ա կ ի 162 թւի մէջ գաղափարի զինուորներ կանուանէիք, իսկ ես, եթէ թոյլ կը տաք, բարեփոխելով մի քիչ ձեր այդ գեղեցիկ յորջորջումը, այդպիսիներին գ ա ղ ա փ ա ր ի ն ա հ ա տ ա կ ն ե ր կոչեմ, որովհետև այդպիսիներն են որոնք կրելով ու տանելով ամեն տեսակ թէ նիւթական և թէ մտաւոր զրկանք, նեղութիւն ու տանջանքներ, ենթարկուելով շատ անգամ անյայտ ու ծածուկ կերպով... զանազան վտանգաւոր տագնապներու, դարձեալ մինչև վերջին շունչերնին կռուականն ու կը մաքառեն ազգին վէրքերը դէպի վատն տանող պատճառաց և անձանց դէմ. իսկ չէ եղած ցարդ մի կենդանի շունչ, մի ազնիւ ձայն որ, մի իւիք քաջալեր կանգնած լինի գէթ անոնց կողմանէ՝ որոց առաջին և գլխաւոր պարտականութիւնն էր այդ։

Այն երկար խօսակցութիւնը ձեր յարգելի ընթերցողաց հետ ինձ մասնաւոր պարտականութիւն համարած էի, բացի բարոյական շարժառիթէ գլխաւորաբար այն պատճառով, որ նախ հրապարակաւ յայտնած լինիմ իմ կարծիքներն ու հաւատ ձեր երիտասարդութեան նկատմամբ, երկրորդ՝ իմ խոր ցաւակցութիւնը ծանուցանել, որ ինչպէս լսածիս համեմատ պ. Նիկողոսեան մտադիր է ընդհատել իւր բեղմնաւոր գործունէութիւնն և հեռանալ ասպարեզէն, մանաւանդ՝ այսպիսի կարեւոր և թանկագին ժամանակ, ով գիտէ վասն ազգի և հայրենեաց ծը ապարդիւն և անբերրի աշխարհ ու ասպարէզ։ Ի՞նչ ընէ խեղճը, ինչ գործէ, ի հարկէ մարդ կարող չէ օդով սնանիլ ու ապրիլ..., ուրեմն պէտք չէ կասկածել որ լաւ յառաջադիմութիւն կրնայ լինիլ մեր մէջ այսպիսի «զարգացեալ» կարծուած ու նկատուած երիտասարդութեան ընթացքով, սակայն պէտք է դարձեալ ապրիլ, տոկալ և տեսնել այն ասեն թէ, ով կրնայ բռնել այս ազգի ապիկար գործողաց գլխին վերայ այն դ ա մ ո կ լ ե ա ն թուրը՝ որոյ ազդեցութեամբ միայն կարելի է քիչ ու շատ մեր ժողովրդական շահուց օգտակար ու նպաստաւոր ընկալուածներն արտադրել։

Վերջացնելով խօսակցութիւնս, կը գամ յայտարարել. որ թէ մեր վերոգրեալ բոլոր ասացուածոց իբր կենդանի ապացոյց, և թէ որպէս շօշափելի փաստ ձեր յարգելի աշխատակցին քարոզած գործնական գաղափարաց, քանի համակրութեամբ նայած է Կ. Պոլսոյ «ինտէլլիգէնցիայի» ա մ ե ն ա լ ո ւ ր ջ մասը, բուն ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը, հակառակ մի քանի հատ ապիկար, կեղտոտ, և նախանձոտ տիրացուներու։

Ահա ձեզ կենդանի վկայ և ապացոյց այն արդիւնաբեր ընկերութիւնը, որ կը վերակազմի այսօր սրբազան ՆԵՐՍԷՍ պատրիարքի նախաձեռնութեամբ, Այդ համազգային ընկերութիւնը «տնտեսական միութիւն հայոց» անուն ընկերութիւնն է, որոյ մասին դուցէ առիթ ունենանք խօսել ուրիշ անգամ։ Ոչ նուազ նշանակութեան արժանի և հաստատ ապացոյց կարելի է համարել նաև Միացեալ ընկերութեան փոփոխութիւններն նախնական կրթութեան գաղափարն ընդունելով, և հետզհետէ ներկայ տնօրէն ժողովոյ անշահախնդիր և աչալուրջ ջանից և հսկողութեանց շնորհիւ որոշ և նպատակի մօտ ընթացքի մը մէջ դրուելու ջանադիր գտնուելնին և այլն և այլն։

Յարութիւն Յ. Զաքրեան